# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
# ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ
համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ,
գ.Երվանդաշատ, Ազատության փող. 24,
Հեռ. (093) 197080 , yervandashat.armavir@mta.gov.am

N 73
*10 ապրիլ 2020թ.*

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ներկայացնում ենք Երվանդաշատ համայնքի ավագանու N 3 նիստի N 18-Ն որոշումը, կայացած 06.04.2020 թվականին:

Առդիր՝ 67 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք N 07137-2020
13 04 2020

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Երվանդաշատ, (093) 197080, yervandashat.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

06 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 18-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N29-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով 2020 թվականի մարտի 21-ի թիվ 27.3/6761 ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, Երվանդաշատ համայնքի

Ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 11-ի <<2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N29-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.Երվանդաշատ համայնքի 2020 թվականի վարչական բյուջեի եկամտային մասի տող 1257-ին ավելացնել 1500,0 հազ. դրամ
1.2.վարչական բյուջեի եկամտային մասն ավելացնել 1100,0 հազ. դրամ՝ հողի հարկ
1.3.վարչական բյուջեի եկամտային մասն ավելացնել 750,0 հազ. դրամ՝ գույքահարկ ֆիզ. անձանցից:

2.Ծախսային մասով՝
2.1.Երվանդաշատ համայնքի 2020 թվականի վարչական բյուջեի բաժին 01, խումբ 6, դաս 1 4111 հոդվածն ավելացնել 1200,0 հազ.դրամ

2.2.բաժին 01, խումբ 6, դաս 1 4239 հոդվածն ավելացնել 1200,0 հազ դրամ
2.3.բաժին 1, խումբ 1, դաս 1 4264 հոդվածն ավելացնել 450,0 հազ. դրամ
2.4.բաժին 06, խումբ 4, դաս 1 4252 հոդվածն ավելացնել 200,0 հազ. դրամ
2.5.բաժին 5, խումբ 1, դաս 1 4264 հոդվածն ավելացնել 300,0 հազ. դրամ

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օր:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՓՐԻԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԶԱՎԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՃԱՀԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 010-594018

№ 27.3/6761
«27 03 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ,

ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՐՈՆ ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան,

Ի պատասխան Ձեր 2020 թվականի մարտի 20-ի թիվ 59 գրության՝ կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 29-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՆԱՐԵԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Կատարող՝ Անահիտ Գևորգյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594116

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 29-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 29-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի 1-ին կետում ավագանու որոշման վերնագիրն անհրաժեշտ է նշել չակերտների մեջ:

**Իրավական ակտերի փորձաքննության**

**գործակալություն**